ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 949 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1449-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 12-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱԳ ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1449-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-6-րդ կետերով՝

«

5.	8462510009	TZ 760 stirrup bending machine (ԹԶ 760 սթիրրապ բենդինգ մաշին) (CNC սեղմիչ ճկման մեքենա)	Մետաղական ամրաններից և ամրալարերից ամրակալներ, կեռեր, ոտնակներ և այլ նմանատիպ ապրանքատեսակների արտադրության հիդրավլիկ սարքավորում թվային ղեկավարմամբ՝ 55 Կվտ հզորությամբ	հատ	3	Չինաստան	Չինաստան	46 500 000	
6.	8701219019	IVECO MAGIRUS STRALIS 6X4 AB3C (ԻՎԵԿՈ ՄԱԳԻՐՈՒՍ ՍԹՐԱԼԻՍ 6X4 ԱԲՅՍԻ)	Դիզելային շարժիչով բեռնատար /թամբային/ քարշակ՝ 27 տ. թույլատրելի առավելագույն զանգվածով	հատ	1	Իսպանիա	Գերմանիա	18 295 461	

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «519 440 000» թիվը փոխարինել «584 235 461» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ